# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված *ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՏԳ-18/2* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.04.2018թ. ժամը 15-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ս. Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

**Օրակարգ**

***Հայտերի բացման և գնահատման մասին***

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«*ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՏԳ-18/2*» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. <<**Տիգրան Մեծ հրատարակչություն**>> **ՓԲԸ,(ք. Երևան, Արշակունյաց 2)**
2. <<**ՀԵԼՆ ՊՐԻՆՏ**>> **ՍՊԸ,(ք. Երևան, Մանուշյան 96)**
3. <<**Յասոն**>> **ՍՊԸ,(ՀՀ, ք. Երևան, Վրացական 16)**
4. <<**Հայկարլի**>> **ՍՊԸ,(ք. Երևան, Կիևյան 18/6)**
5. <<**Իրինա Մելքոնյան**>> **Ա/Ձ,(ք. Երևան, Շերամի 47-28)**
6. <<**Բեկոր-հրատ**>> **ՍՊԸ,(ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60)**
7. <<**Լուսաբաց հրատարակչատուն**>>**ՍՊԸ,(ք.Երևան, փ. Տերյան)**
8. **ԱՁ** <<**Արման Ասմանգուլյան**>>**,(ք.Երևան, Ներսիսյան 1, 17)**
9. <<**Աստղիկ Գրատուն**>> **ՍՊԸ** >>**,(ք.Երևան Ծովակալ Իսակովի պող., 48/2 շենք)**

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը**

| Հ/Հ | Անվանում | Քանակ | Նախահաշվային գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | <<Տիգրան Մեծ հրատարակչություն>> ՓԲԸ | <<ՀԵԼՆ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ* | <<Յասոն>> ՍՊԸ | <<Հայկարլի>> ՍՊԸ | <<Իրինա Մելքոնյան>> Ա/Ձ* | <<Բեկոր-հրատ>> ՍՊԸ | <<Լուսաբաց հրատարակչատուն>>ՍՊԸ | ԱՁ <<Արման Ասմանգուլյան>> | <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ |
| 1 | Պատվերով տպագրվող նյութեր | 43000 | 1290000 | | 595000 | 445000 | 838070 | | 533200 | | 550000 | |
| 2 | Պատվերով տպագրվող նյութեր | 29307 | 1025745 | | 967000 | 915000 | 1142973 | | 852830 | | 995000 | 923170,5 |
| 3 | Պատվերով տպագրվող նյութեր | 1370 | 520600 | | | 338000 | 705550 | | 642530 | 534300 | 499000 | 262355 |
| 4 | Պատվերով տպագրվող նյութեր | 25000 | 300000 | | 245000 | 164000 | 491000 | | 222500 | | 262500 | 143750 |
| 5 | Պատվերով տպագրվող նյութեր | 2100 | 1218000 | 4200000 | | 822000 | 1963500 | | 1005900 | | 1155000 | 787500 |
| 6 | Պատվերով տպագրվող նյութեր | 2200 | 1276000 | 4400000 | | 860000 | 1881000 | | 1053800 | | 1210000 | 787600 |
| 7 | Պատվերով տպագրվող նյութեր | 2500 | 95000 | 4162500 | | 62000 | 187500 | | 110000 | | 88500 | |
| 8 | Պատվերով տպագրվող նյութեր | 300 | 90000 | | | | | | | | | |
| 9 | վկայականներ | 250 | 250000 | | | | | 374750 | | | 200000 | |
| 10 | վկայականներ | 199 | 99500 | | | | | | | | 99500 | |

* Հանդիսանում են ԱԱՀ չվճարող:

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը արձանագրեց, որ.**

1. **8-րդ** չափաբաժնի համար հայտ չի ներկայացվել:
2. ԱՁ Արման Ասմանգուլյանի առաջարկած գինը 10-րդ չափաբաժնի համար գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ,

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2018թ. ապրիլի 10-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

**Քարտուղարին՝**

Մեկ աշխատանքային օրում կազմակերպություններին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ __________ Ս. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ __________ Լ.Հովհաննիսյան

__________ Վ.Մկրտչյան

__________ Մ.Անտոնյան

__________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ __________ Ռ. Խաչատրյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված *ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՏԳ-18/2* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.04.2018թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ս. Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

### 1. Միաժամանակյա բանակցությունների մասին

ԱՁ Արման Ասմանգուլյան ներկայացրել է նոր գնային առաջարկ, համաձայն որի 10-րդ չափաբաժնի համար առաջարկել է 99500/ առանց ԱԱՀ՝ 82817/ՀՀ դրամ:

**Հանձնաժողովը որոշեց.**

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

**1, 7** չափաբաժնի համար՝ <<**Յասոն**>> **ՍՊԸ**-ին,
**2** չափաբաժնի համար՝ <<**Բեկոր-հրատ**>> **ՍՊԸ**-ին,
**3, 4, 5, 6** չափաբաժնի համար՝ << **Աստղիկ Գրատուն**>> **ՍՊԸ**-ին,
**9, 10**, չափաբաժնի համար՝ **ԱՁ Արման Ասմանգուլյան**-ին:

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

**1** չափաբաժնի համար՝ <<**Բեկոր-հրատ**>> **ՍՊԸ**-ին,
**2-6** չափաբաժնի համար՝ <<**Յասոն**>> **ՍՊԸ** -ին:
**7, 9, 10-րդ չափաբաժինների** համար՝ **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակիցներ չեն ճանաչել:

2. "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն ընթացակարգի 8-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

3. Հաստատել ընթացակարգի 8-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը(կցվում է):

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

**Հանձնաժողովի քարտուղարին՝**

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ____________________ Ս. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________________ Վ.Մկրտչյան

____________________ Լ.Հովհաննիսյան

____________________ Մ.Անտոնյան

____________________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________________ Ռ. Խաչատրյան